Զարգացրեք ինքնապահովում Տիրոջ ձևով

Ուսումնասիրեք ստորև ներկայացված սուրբ գրությունների հղումներն ու հայտարարությունները՝ փնտրելով հետևյալ երկու հարցերի պատասխանները.

1. Ի՞նչ է Տերն ուսուցանել սուրբ գրություններում և Իր մարգարեների միջոցով, որը կարող է օգնել մեզ զարգացնել մեր ինքնապահովումը:
2. Ի՞նչ խոչընդոտների կարող է բախվել մարդը, որոնք հաղթահարելու համար նա կունենա Երկնային Հոր օգնության կարիքը:

Վարդապետություն և Ուխտեր 9.7–8

Վարդապետություն և Ուխտեր 58.26–28

Վարդապետություն և Ուխտեր 88.124

Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.55

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն (1899–1994) ուսուցանել է.

Տերն աշխատում է ներսից դուրս: Աշխարհն աշխատում է դրսից ներս: Աշխարհը մարդկանց հանում է փլատակներից: Քրիստոսը դուրս է հանում փլատակները մարդկանց միջից, այնուհետև նրանք ինքնուրույն են դուրս գալիս փլատակներից: Աշխարհը ձևավորում է մարդկանց՝ փոխելով նրանց միջավայրը: Քրիստոսը փոխում է մարդկանց, որոնք այնուհետև փոխում են իրենց միջավայրը: Աշխարհը ձևավորում է մարդկային վարքը, իսկ Քրիստոսը կարող է փոխել մարդկային էությունը: (Էզրա Թաֆտ Բենսոն, «Born of God,» *Ensign*, նոյ. 1985, 6)

Առաջին Նախագահության նախկին նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը բացատրել է.

Տիրոջ ուղին այն չէ, որ նստենք գետի կողքին ու սպասենք, թե երբ ջուրը կվերջանա, որ գետն անցնենք: Այն համախմբվելն է, թևքերը ծալելն ու գործի անցնելը, կամուրջ կամ նավակ կառուցելը, որպեսզի հատենք-անցնենք մեր մարտահրավերների ջրերը: (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Հոգ տանելու Տիրոջ ուղին», *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 54)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_561-1